ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2018 թթ. պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հիմնական ցուցանիշների վերաբերյալ









2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվեց 5.2 % տնտեսական աճ՝ 2018 թ. ծրագրված ՀՆԱ-ի 4.5 % իրական աճի և 2017թ. ՀՆԱ-ի 7.5 % իրական աճի դիմաց: Ընդ որում, ՀՆԱ-ի դեֆլյատորը 2018թ. կազմել է 102.5 %՝ 2018 թ. ծրագրված 103.5 %-ի և 2017թ. 102.2 %-ի պարագայում: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունը տնտեսական աճի 2018թ. ցուցանիշով առաջատար է ԵԱՏՄ գործընկեր-երկրների, Վրաստանի և Ադրբեջանի հետ համեմատությամբ: Մասնավորապես, ՀՀ-ում ՀՆԱ-ի 5.2 % իրական աճի պարարգայում, *Ռուսաստանի Դաշնությունում արձանագրվել է ՀՆԱ-ի 2.3 % իրական աճ, Բելառուսի Հանրապետությունում՝ ՀՆԱ-ի 3 % իրական աճ, Ղասախստանում՝ ՀՆԱ-ի 4.1 % իրական աճ, Ղրղզստանում՝ ՀՆԱ-ի 3.5 % իրական աճ, Ադրբեջանում՝ ՀՆԱ-ի 1.4 % իրական աճ և Վրաստանում՝ ՀՆԱ-ի 4.7 % իրական աճ:

2018 թվականին ՀՆԱ-ի աճին տնտեսության ճյուղերի նպաստման տեսանկյունից առաջատար է ծառայությունների ճյուղը 4.75%-ային կետով՝ 2017 թվականի 6.0 %-ային կետի դիմաց:

2018 թվականին ՀՆԱ-ի աճին դրականորեն են նպաստել նաև արդյունաբերությունը՝ 0.75%-ային կետ՝ 2017 թվականի 1.2 %-ային կետի դիմաց, շինարարությունը՝ 0.14%-ային կետ՝ 2017 թվականի 0.2 %-ային կետի դիմաց և զուտ անուղղակի հարկերը՝ 0.84%-ային կետ՝ 2017 թվականի 1.0 %-ային կետի դիմաց: Գյուղատնտեսությունը 2018 թվականին ՀՆԱ-ի աճին նպաստել է բացասական իմաստով՝ -1.28%-ային կետ՝ 2017 թվականի -0.9 %-ային կետի դիմաց:

2018 թվականին ՀՆԱ-ն անվանական արտահայտությամբ կազմել է 6 տրիլիոն 2.7 մլրդ դրամ՝ 2018 թվականի համար կանխատեսված 5 տրիլիոն 850.7 մլրդ դրամի և 2017 թվականին արձանագրված 5 տրիլիոն 568.9 մլրդ դրամի դիմաց, ինչը նշանակում է, որ 2018 թվականին ՀՆԱ-ն անվանական արտահայտությամ 2018 թվականի կանխատեսված ցուցանիշը գերազանցում է 2.6%-ով, իսկ 2017 թվականի փաստացի ցուցանիշը գերազանցում է 7.8 %-ով:

*Աղբյուրը Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2019 թվականի ապրիլ ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների զեկույց

ԱԺԲԳ









Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2018 թ.-ին կազմել է 37.6%՝ բարելավելով 2017 թ. ցուցանիշը 0.3 %-ային կետով: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծման մասնաբաժինն ավելացել է 3.5 %-ային կետով և կազմել է ՀՆԱ-ի 53%-ը: Արդյունքում ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռը ՀՆԱ-ի նկատմամբ 2018 թ.-ին վատթարացել է կազմելով -15.4 %՝ 2017 թվականի 12.2 %-ի դիմաց:

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2018 թ. կազմել է 7375.2 մլն ԱՄՆ դոլար՝ 2017թ. համեմատ աճելով 16.4%-ով:

2018 թ.-ին վատթարացման միտումներ են արձանագրվել նաև ընթացիկ հաշիվ / ՀՆԱ և առևտրային հաշվեկշիռ / ՀՆԱ ցուցանիշների մասով: Մասնավորապես, ընթացիկ հաշիվ / ՀՆԱ հարաբերակցությունը 2018 թ.-ին կազմել է -9.1 %՝ 2017 թ. -2.4 %-ի պարագայում, իսկ առևտրային հաշվեկշիռ / ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է -14.2 %՝ 2017 թվականի -11.9 %-ի դիմաց:

Միջին գնաճը 2018 թ.-ին արձանագրվել է 2.5 %-ի մակարդակում՝ ծրագրված 4.0 % և 2017 թ.՝ 1.0 %-ի դիմաց:

Գնաճը ժամանակաշրջանի վերջում 2018 թ.-ին կազմել է 1.8%՝ ծրագրված 4+-1.5 % և 2017 թվականի՝ 2.6 %-ի դիմաց:

2018 թվականի պետական բյուջեի եկամուտները կազմել են 1 տրիլիոն 341.7 մլրդ դրամ, ինչը կազմում է 2018 թվականի ճշտված պլանի 98.1 %-ը և 2018 թվականի հաստատված մակարդակի 102.6 %-ը: Պետական բյուջեի եկամուտների 2018 թվականի մակարդակը 2017 թվականի համապատասխան ցուցանիշը գերազանցում 8.4 %-ով: Ի դեպ, 2018 թ. և 2017թ. մակարդակներն միմյանց նկատմամբ համադրելի չեն պայմանավորված հարկային օրենսգրքի համապատասխան փոփոխություններով:

2018 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 1 տրիլիոն 447.1 մլրդ դրամ, ինչը կազմում է 2018 թվականի ճշտված պլանի 94.7 %-ը, 2018 թվականի հաստատված մակարդակի 98.8 %-ը և 2017 թվականի համապատասխան ցուցանիշի 96.2 %-ը:

2018 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը կազմել է 105.4 մլրդ դրամ, 2018 թվականի ճշտված 161.9 մլրդ դրամի, 2018 թվականի հաստատված 156.9 մլրդ դրամ մակարդակի և 2017 թվականի 267 մլրդ դրամի դիմաց:

2018 թ. պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 22.4 %՝ 2018 թ. համար ծրագրված չափով և 0.2 %-ային կետով ավել քան 2017 թ. էր:

2018 թ. պետական բյուջեի ծասեր//ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 24.1 %՝ 2018 թ. համար ծրագրված 25 %-ի և 2017 թ. 26.7%-ի դիմաց:

ԱԺԲԳ









2018 թ. պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը 1.8 %՝ 2018 թ. համար ծրագրված մակարդակից պակաս է 0.9%-ային կետով և 2017 թ. փաստացի ցուցանիշից պակաս է 3%-ային կետով:

2018 թվականի պետական բյուջեի եկամուտները փաստացի ձևավորվել են՝

- հարկային եկամուտներից և պետական տուրքերից՝ 1 տրիլիոն 258.1 մլրդ դրամ, որը կազմում է 2018 թվականի ճշտված մակարդակի 99.7 %-ը, 2018 թվականի հաստավածի 100.8 %-ը և 2017 թվականի մակարդակի 108.6 %-ը (համադրելի փաստացի ցուցանիշը 2018 թվականի համար կկազմի ավելի քան 1,344.8 մլրդ դրամ, որից 48.1 մլրդ դրամը հարկերի միասնական հաշվի զուտ մուտքն է),
- պաշտոնական դրամաշնորհներից՝ 11.2 մլրդ դրամ, որը կազմում է 2018 թվականի ճշտված պլանի 29 %-ը, 2018 թվականի հաստավածի 31.4 %-ը և 2017 թվականի մակարդակի 77 %-ը,
- այլ եկամուտներց՝ 72.3 մլրդ դրամ, որը կազմում է 2018 թվականի ճշտված պլանի 111.7 %-ը, 2018 թվականի հաստավածի 301.9 %-ը և 2017 թվականի մակարդակը գերազանցում է 10.9%-ով:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաերակցությունը փաստացի 2018 թ. կազմել է 21 %՝ 2018 թ. ծրագրված 21.3 %-ի և 2017թ. 20.8 %-ի դիմաց: Համադրելի դարձնելու պարագայում 2018 թ. ցուցանիշը կկազմի 21.8 %, իսկ 2017թ. ցուցանիշը 20.3 %:

2018 թ. պետական բյուջի ծասերում 1 տրիլիոն 299 մլրդ դրամը կազմել են ընթացիկ ծախսերը, որոնք ճշտված ցուցանիշը զիջում են 2.9 %-ով, հաստատված մակարդակը՝ 0.6 %-ով, իսկ 2017թ. մակարդակը գերազանցում են 2.5 %-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 148.1 մլրդ դրամ՝ 22 % պակաս ճշտված պլանից, 6.3 % պակաս հաստաված ցուցանիշից և շուրջ 38 % պակաս 2017թ. մակարդակից: Ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2018թ. կազմել են 151.9 մլրդ դրամ՝ 26 % պակաս ճշտված պլանից, 12.2 % պակաս հաստաված ցուցանիշից և 36.2 %-ով պակաս 2017թ. մակարդակից: Հատկանշական է, որ նույնիսկ այս պարագայում 2018 թ. փաստացի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը բացարձակ արժեքով գերազանցել են պետական բյուջեի պակասուրդը՝ պահպանելով հարկաբյուջետային կանոնը:

ԱԺԲԳ









2018 թ. պետական բյուջեի ծախսերում 278.5 մլրդ դրամ տրամադրվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 97.6 %, իսկ հաստատված ցուցանիշից պակաս է 0.09 %-ով: 2017թ. համեմատ 2018թ. փաստացի ցուցանիշը ավել է 1.4 %-ով:

2018 թ. պետական բյուջեի ծախսերում 112.2 մլրդ դրամ տրամադրվել է տնտեսական հարաբերությունների բաժնին: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 82.6 %, հաստատված ցուցանիշի նկատմամբ շուրջ 83 %, իսկ 2017թ. համեմատ 2018թ. փաստացի ցուցանիշը պակաս է 13.3 %-ով:

2018 թ. պետական բյուջեի ծախսերում 238.5 մլրդ դրամ տրամադրվել է պաշտպանության բնագավառին: Կատարողականը ճշտված պլանի և հաստատված ցուցանիշի նկատմամբ կազմում է շուրջ 96.4 %: 2017թ. համեմատ 2018թ. փաստացի ցուցանիշը պակասէ 19 %-ով:

2018 թ. պետական բյուջեի ծախսերում 123.1 մլրդ դրամ տրամադրվել են հասրակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 96.6 %, իսկ հաստատված ցուցանիշն ու 2017թ. մակարդակը գերազանցում է, համապատասխանաբար՝ 20 %-ով և 0.4 %-ով:

2018 թ. պետական բյուջեի ծախսերում 5.7 մլրդ դրամ տրամադրվել է շրջակա միջավայրի պաշտպանության: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 53.1 %, հաստատված ցուցանիշի նկատմամբ՝ 49 % և 2017թ. նկատմամբ 105.5 %:

2018 թ. պետական բյուջեի ծախսերում 11.7 մլրդ դրամ տրամադրվել է բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 46,9 %, հաստատված ցուցանիշի նկատմամբ՝ 62.5 %, իսկ 2017թ. համեմատ՝ 92.1%-ով:

2018 թ. պետական բյուջեի ծախսերում 79.6 մլրդ դրամ տրամադրվել է առողջապահությանը: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 95.6 %, իսկ հաստատված ցուցանիշի նկատմամբ՝ 94.6%: 2017թ. համեմատ 2018թ. փաստացի ցուցանիշը պակասէ 4.3%-ով:ն

2018 թ. պետական բյուջեի ծախսերում 416.6 մլրդ դրամ տրամադրվել է սոցիալական պաշտպանության: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 98.2 %, իսկ հաստատված ցուցանիշի նկատմամբ՝ 101.9 %: 2017թ. նկատմամբ 12018թ. փաստացի ծախսերն աճել են 1.8 %-ով:

ԱԺԲԳ









2018 թ. պետական բյուջեի ծախսերում 121.6 մլրդ դրամ տրամադրվել են կրթության ոլորտին: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 97.6 %, իսկ հաստատված ցուցանիշից և 2017թ. մակարդակից պակաս է համապատասխանաբար՝ 4.4 %-ով և 2.25 %-ով:

2018թ. ՀՀ պետական պարտքի աճի միտումները նախորդ մի քանի տարիների համեմատ դանդաղել են:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ պետական պարտքը կազմել է 3 տրիլիոն 349 մլրդ դրամ, որը 3.3 %-ով պակաս է ծրագրված մակարդակից, բայց 2.1 %-ով ավել է 2017 թ. համապատասխան ցուցանիշից (2017թ.՝ 2016թ. նկատմամբ աճը կազմել է 14 %, 2016թ.՝ 2015թ. նկատմամբ՝ 17.1 %, 2015թ.՝ 2014թ. նկատմամբ՝ 16.4 %);
- ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 2 տրիլիոն 676.5 մլրդ դրամ, որը 4.5 %-ով պակաս է ծրագրված մակարդակից և 2017 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 0.6 %-ով;
- ՀՀ ներքին պետական պարտք կազմել է 672.5 մլրդ դրամ, որը ծրագրված և 2017 թ. ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 2 %-ով և 8.6 %-ով:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ պետական պարտքը ԱՄՆ դոլարով արտահայտված կազմել է 6 միլիարդ 922.9 մլն , որը 3.4 %-ով պակաս է ծրագրված մակարդակից և 2.2 %-ով ավել է 2017 թ. համապատասխան ցուցանիշից ;
- ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 5 մլրդ 532.9 մլն ԱՄՆ դոլար, որը 4.7 %-ով պակաս է ծրագրված մակարդակից և 2017 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 0.7 %-ով;
- ՀՀ ներքին պետական պարտք կազմել է 1 մլրդ 390 մլն ԱՄՆ դոլար՝ ծրագրված և 2017 թ. ցուցանիշները գերազանցելով համապատասխանաբար 2 %-ով և 8.6 %-ով:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3 տրիլիոն 82.9 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 6 մլրդ 372.9 մլն), որը 2.8 %-ով պակաս է ծրագրված մակարդակից և 2017 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 3.2 %-ով;
- ՀՀ ԿԲ արտաքին պարտքը (ԱՄՆ դոլարով՝ 550 մլն) կազմել է 266.1 մլրդ դրամ, որը ծրագրված և 2017 թ. ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 8.2 %-ով և 8.6 %-ով:

ԱԺԲԳ









2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 410.4 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 4 մլրդ 982.8 մլն), որը 4.1 %-ով պակաս է ծրագրված մակարդակից, իսկ 2017 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 1.8 %-ով;
- ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 672.5 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 1 մլրդ 390 մլն), որը 2 %-ով գերազանցում է ծրագրված մակարդակը և 8.6 %-ով գերազանցում է 2017 թ. մակարդակը;
- ՀՀ ԿԲ արտաքին պարտքը կազմել է 266.1 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 550 մլն) , որը ծրագրված և 2017 թ. ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 8.2 %-ով և 8.6 %-ով:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թեև բացարձակ արժեքով ՀՀ պետական պարտքը աճել է, այդուհանդերձ ՀՆԱ-ի նկատմամբ այն նվազել է կազմելով 55.8 %՝ 2017թ. 58.9 %-ի դիմաց:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ծրագրված 59.2 % մակարդակից ևս ցածր է՝ նվազելով՝ 3.4 %-ով:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, որը կառավարության պարտքի կառավարման տեսանկյունից կարևոր ուղենշային ցուցանիշ է, 2017թ. (53.7%) նկատմամբ նվազել է 2.3 %-ային կետով՝ կազմելով 51.4 %:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է նաև ծրագրված (54.2%) ցուցանիշի նկատմամբ. նվազումը կազմել է 2.3 %-ային կետ:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման տեսանկյունից կարևոր մեկ այլ ուղենշային ցուցանիշ է նաև ՀՀ կառավարության պարտքի մեջ արտաքին և ներքին պարտքերի կառուցվածը, ըստ որի այդ կառուցվածքում ՀՀ կառավարության ներքին պարտքը պետք է լինի առնվազն 20 %: 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության ներքին պարտքը ՀՀ կառավարության պարտքի մեջ կազմել է 21.8 %՝ ծրագրված և 2017թ. 20.8 %-ների դիմաց, ինչը փաստում է, որ ՀՀ կառավարության պարտքի կառավարումն իրականացվում է սահմանված ուղենշային ցուցանիշների տիրույթում:

ԱԺԲԳ







2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքի կառուցվածքը ունեցել է հետևյալ տեսքը՝
- արտաքին պարտք 79.9 %՝ ծրագրված 81 %-ի և 2017թ. 81.1 %-ի դիմաց,
- ներքին պարտք 20.1 %՝ ծրագրված 19 %-ի և 2017թ. 18.9 %-ի դիմաց:

*Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ 2014-2018թթ. պետական բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության կայքի տվյալները ՀՀ պետական պարտքի վերաբերյալ և Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2019 թվականի ապրիլ ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների զեկույց: